Ինչպես պատրաստվել գերագույն համաժողովին

Երբ Հիսուս Քրիստոսն այցելեց նեփիացիներին, Նա հրավիրեց նրանց պատրաստել իրենց միտքը՝ լսելու և հասկանալու Իր ուղերձը (տես 3 Նեփի 17.3): Պատկերացրեք, թե ինչպիսին կարող է լինել ձեր փորձառությունը գերագույն համաժողովում, եթե դուք նույնն անեք:

1. Ուսումնասիրեք ստորև բերված նյութերը՝ փնտրելով եղանակներ, որոնցով կարող եք նախապատրաստվել գերագույն համաժողովում Տիրոջ ուղերձները ստանալուն: Կարող եք նշել այն կարևոր խոսքերն ու արտահայտությունները, որոնք առավել տպավորիչ էին ձեզ համար:

   Մոսիա 2.9, Վարդապետություն և Ուխտեր 88.63

   Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է.

Այսօր և վաղը այս ամբիոնից դուք կշարունակեք լսել ճշմարտությունը: Խնդրում եմ նշել այն մտքերը, որոնք գրավում են ձեր ուշադրությունը և այն մտքերը, որոնք ծագում են ձեր գլխում և մնում ձեր սրտում: Աղոթքով խնդրեք, որ Տերը հաստատի ձեր լսած խոսքերի ճշմարտացիությունը: (Ռասսել Մ. Նելսոն «Ո՞րն է ճիշտ», *Լիահոնա*, նոյեմբեր 2022, 30)

   Առաջին Նախագահությունից նախագահ Հենրի Բ. Այրինգն ուսուցանել է.

Ես գիտեմ Աստծո ծառաներին, որոնք կխոսեն ձեզ հետ այս համաժողովի ընթացքում: Նրանք կանչված են Աստծո կողմից՝ ուղերձներ հղելու Իր զավակներին: Տերն ասել է նրանց մասին. «Ինչ որ ես՝ Տերս, ասել եմ, ես եմ ասել, և չեմ արդարանում, ու թեև երկինքն ու երկիրը պիտի անցնեն, իմ խոսքը չպիտի անցնի, այլ բոլորը պիտի կատարվի, լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է» [Վարդապետություն և Ուխտեր 1.38]:

Դուք ցույց եք տալիս վստահություն Նրա հանդեպ երբ լսում եք, ցանկանալով սովորել և ապաշխարել, և ապա գնում եք և անում այն, ինչ Նա խնդրում է ձեզանից: Եթե դուք վստահում եք Աստծուն այնքան, որ լսում եք Նրա ուղերձը այս համաժողովի յուրաքանչյուր քարոզի, երգի և աղոթքի մեջ, դուք կգտնեք այն: Եվ եթե դուք հետո գնաք և անեք այն, ինչ Նա կկամենա, որ անեք, Նրան վստահելու ձեր ուժը կաճի և ժամանակի ընթացքում դուք կտոգորվեք երախտագիտությամբ՝ հասկանալով, որ Նա սկսել է վստահել ձեզ: (Հենրի Բ. Այրինգ «Վստահիր Աստծուն, հետո գնա ու արա», *Լիահոնա*, նոյեմբեր 2010, 73)

   Նախկինում Առաջին Նախագահությունից նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆն ուսուցանել է.

Երբ դուք պատրաստվում եք գերագույն համաժողովին, ես հրավիրում եմ ձեզ մտածել այն հարցերի մասին, որոնց պատասխանների կարիքն ունեք: Օրինակ՝ դուք կարող եք ցանկանալ Տիրոջ առաջնորդությունը՝ ձեր առաջ ծառացած դժվարությունները հաղթահարելու համար:

Ձեր հատուկ աղոթքների պատասխանները կարող են գալ անմիջապես որևէ ելույթից կամ արտահայտությունից: Այլ պահերի պատասխանները կարող են գալ, կարծես թե, առնչություն չունեցող բառից, արտահայտությունից կամ երգից: Կյանքի օրհնությունների հանդեպ երախտագիտությամբ լցված սիրտը և խորհրդին հետևելու անկեղծ ցանկությունը կպատրաստի անձնական հայտնության ուղին: (Դիտեր Ֆ. Ուխդորֆ «Գերագույն համաժողով. ոչ սովորական օրհնություն», *Ensign*, սեպտ. 2011, 4),

2. Ձեր ուսումնասիրածի հիման վրա կազմեք այն եղանակների ցանկը, որոնցով կարող եք պատրաստվել լսելու Տիրոջ ձայնը գերագույն համաժողովում:

3. Թվարկեք մի քանի այլ եղանակներ, որոնցով կարող եք պատրաստվել լսելու Տիրոջ ձայնը գերագույն համաժողովում:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_541-1